Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2022-2023 ուստարի)
12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում Հայ(ա) երկիրը. 0,5 մ.
   ա) Ք.ա. XXVII դ. բ) Ք.ա. XXVI դ. գ) Ք.ա. XXVIII դ. դ) Ք.ա. XXV դ.
2. Որքա՞ն էր բուն հռոմեական զորքի թիվը Ք.ա. 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) 50 հազար բ) 22 հազար գ) 28 հազար դ) 30 հազար
3. Ե՞րբ է Տրդատ II-ը ստիպված հեռացել Հռոմեական կայսրության սահմանները. 0,5 մ.
   ա) 252 թ. բ) 254 թ. գ) 250 թ. դ) 238 թ.
4. Ե՞րբ է Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև կնքվել «հավիտենական» հաշտությունը. 0,5 մ.
   ա) 536 թ. բ) 532 թ. գ) 534 թ. դ) 538 թ.
5. Ո՞ր թվականին է պեղումների արդյունքում բացվել Պորտաբլուրի տաճարական համալիրը. 0,5 մ.
   ա) 1995 թ. բ) 1981 թ. գ) 1991 թ. դ) 1985 թ.
6. Քանի՞ դրոշ են հայերը խլել թշնամուց Հալիձորի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) 143 բ) 148 գ) 113 դ) 133
7. Քանի՞ ինքնաթիռ է կործանել Սերգեյ Բուռնազյանը. 0,5 մ.
   ա) 20 բ) 22 գ) 24 դ) 26
8. Ե՞րբ է սկսվել Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը. 0,5 մ.
   ա) 1940 թ. բ) 1936 թ. գ) 1933 թ. դ) 1938 թ.
9. Ո՞ր դարում է առաջին անգամ հիշատակվում Հայասա երկիրը: 0,5 մ.
10. Բեհիսթունյան եռալեզու արձանագրության էլամերեն տեքստում ինչպե՞ս է կոչվում Հայաստանը: 0,5 մ.
11. Հռոմեացի ո՞ր պատմիչն է Ք.հ. 1 թ. մասին գրել. «Հայերը մնացին առանց թագավորի անտերունչ»: 0,5 մ.
12. Ո՞ր թվականին է տեղի ունեցել «Արյան լճի» ճակատամարտը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Համատարած կոլեկտիվացումը Երևանի ամբողջ գավառում, Լենինականի և Լոռու գավառների մեծ մասում
    բ) 6750 ընտանիքների հեռանալը Սևանի ավազանից
    գ) Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի կազմակերպումը
    դ) Երևանի պետական համալսարանին կից ասպիրանտուրայի բացումը
    ե) Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը
    զ) Պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
    է) Դարալագյազի ամբողջ շրջանի գտնվելը ապստամբած գյուղացիների ձեռքում
    ը) Էջմիածնի վանքը փակելու մասին որոշման ընդունումը
    թ) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Մելքոն խան 2. Ստեփանոս Նազարյանց 3. Գալուստ Կոստանդյան
    4. Գաբրիել վրդ. Այվազովսկի 5. Մարկոս Աղաբեկյան 6. Հովհաննես Չամուռճյան-Տերոյանց
    ա. «Մեթոդի վրա» բ. «Երևակ» գ. «Ղանուն»
    դ. «Հյուսիսափայլ» ե. «Կռունկ հայոց աշխարհին» զ. «Մասյաց աղավնի»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) 1708 թ. Իսրայել Օրու դեսպանությունը հասել է Սպահան:
    բ) 1725 թ. մայիսին մելիքները շուրջ 6000 թուրք զինվորների տեղավորել են Արցախի 33 հայկական գյուղերում և գիշերային հանկարծակի գրոհով ոչնչացրել նրանց:
    գ) Բյուզանդիայի գործուն աջակցությամբ՝ Վրաց եկեղեցին 607-608 թթ. ընդունում է քաղկեդոնականություն և անջատվում Հայոց Եկեղեցուց:
    դ) Արևմտյան Հայաստանի՝ ռուսների գրաված այն մասը, որը վերադարձվելու էր Թուրքիային, ուներ 2 մլն բնակչություն, որից 1,5 մլն-ը հայ էր:
    ե) 1748 թ. Աստրախանում կառավարությունը հայերին թույլատրել է հիմնել հատուկ հայկական դատարան:
    զ) Կամենեց-Պոդոլսկ քաղաքում XVII դ. կեսերին կար 2200 հայ ընտանիք:

է) 1917 թ. ապրիլին Կովկասի ճակատի հայկական հատվածում կռվում էր ռուսական 5, իսկ պարսկական հատվածում՝ 2 կորպուս (ընդամենը՝ 232 հազար զինվորական):
ը) 1861 թ. Կ. Պոլսում Պետրոս Մաղաքյանի ղեկավարությամբ կազմված առաջին մշտական թատերական խումբը կոչվել է «Արևելյան թատրոն»:
թ) 1996-2006 թթ. վերագործարկվել են ու հզորությունն ավելացրել 250 խոշոր ձեռնարկություններ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Հմայապաշտությունը հավատն է անշունչ առարկաների՝ ծառերի, ժայռերի, քարանձավների, պաշտամունքային հատուկ պատրաստված իրերի նկատմամբ:
բ) Վանի թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
գ) Արան հայերի հնագույն աստվածներից է. նրա պաշտամունքը կապված է եղել անասնապահության հետ:
դ) Բագրատունյաց շրջանում քաղաքների հարկահանությանը, շուկաներին ու առևտրին հետևում էր հատուկ պաշտոնյա, որը կոչվում էր մարաբա:
ե) Բագրատունյաց շրջանում քաղաքների կայազորին, հարկահանությանը, շուկաներին ու առևտրին հետևում էր հատուկ պաշտոնյա, որը կոչվում էր շահապ:
զ) Հայկական գաղթավայրերը նոր շրջանում բնորոշվել են ինքնավարությամբ և ապրել ինքնամփոփ կյանքով:
է) Առաջին վարդապետարանը ՝ միջնակարգ դպրոցը, հիմնվել է Վաղարշապատում:
ը) XIII դարում համալսարանի ղեկավարը կոչվում էր ռաբունապետ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Վանի թագավորության առաջխաղացումը կասեցնելու՝ Ասորեստանի փորձերը Ք.ա. 791 թ. ավարտվում են անհաջողությամբ:
բ) Հին Հայաստանում ազգային կարևորագույն արժեք է համարվել հայկական պետականությունը:
գ) 998 թ. Ծումբ գյուղի մոտ հայ-վրացական ուժերը պարտության են մատնել Յուսուֆ ամիրայի զորքերին:
դ) Կիլիկիայում մոնղոլական զորքերի հրամանատար Բիլարղուն 1307 թ. հրավիրել է հայոց թագավոր Լևոն IV-ին, նախկին թագավոր Հեթում II-ին և 60 հայ իշխանների ու սպանել տվել նրանց:
ե) 1408 թ. Տաթևի համալսարանի շուրջ հարյուր ուսանողների հետ միասին Մեծոփա վանք է փոխադրվել Գրիգոր Տաթևացին:
զ) 1864 թ. Շուշիում բացվել է իգական դպրոց:
է) 1920 թ. ամռանը հողային բարեփոխում է անցկացվել Հայաստանի մի շարք շրջաններում:
ը) 1919 թ. հունիսի 3-ին անգլիացի գեներալ Դևին և Դրոն ստորագրել են Շարուր-Նախիջևանի վերաբերյալ հրաման:
թ) 1986 թ. ՀԽՍՀ քաղաքային բնակչությունը հասել է 2 մլն 300 հազարի:

1	2	3

18. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Հնդկահայերը, ոգևորված Էմինի քարոզչությունից, որոշում են նրա տրամադրության տակ դնել 12 000 դահեկան՝ Հայաստանի ազատագրության համար բանակ ստեղծելու համար:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարի (1920 թ. սեպտեմբերի 1-8, Բաքու) կողմից կազմավորված Արևելքի ժողովուրդների Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության՝ սեպտեմբերի 18-ի «Եզրակացությունից»՝ ուղղված Կոմինտերնի գործկոմի նախագահությանը և ՌԿ(բ)Կ կենտկոմին (պատճենը՝ ՌՍԴԽՀ արտգործժողկոմատին)

Ամեն գնով և հրատապ օգնել Թուրքիայում մարող ազգայնական շարժմանը, ...դրան հնարավոր է հասնել միայն թուրքական ազգայնական զորքերի հետ դաշինքում Հայաստանի վրա հարձակման միջոցով: ...Թուրքական զորքերը կսկսեն հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և հրապարակայնորեն Եվրոպայում ահավոր աղմուկ կբարձրացնենք հայ-թուրքական նոր կոտորածների և դրանք մեկընդմիշտ դադարեցնելու անհրաժեշտության մասին, այդ կոտորածներին վերջ տալու պատրվակով մեր զորքերը կմտնեն Հայաստան ...որտեղ կհաստատվի խորհրդային իշխանություն...

Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակումը Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

ա. Ե՞րբ է կնքվել խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիրը:
բ. Ե՞րբ է սկսվել թուրքական բանակի ներխուժումը ՀՀ տարածք:
գ. Ե՞րբ, ինչպես ծրագրվում էր փաստաթղթում նշված հանգամանքներով, կարմիր բանակը մտավ ՀՀ տարածք:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Հայ պատմագրության մեջ ժամանակագրության ուղղության հիմնադիրը … …-ն (1) է, որից հետո հաջորդ նշանավոր ժամանակագիրը … …-ն (2) է (XII դ.), ով դեպքերի շարադրումն սկսում է արարչագործությունից և հասցնում մինչև … (3) թ.:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 12350 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր խոշոր գետն է սկիզբ առնում նահանգի արևելյան մասի աղբյուրներից:

23. Հայ նշանավոր ո՞ր պետական-քաղաքական և ռազմական գործիչն է պատկերված. 0,5 մ.

24. Աշխատանք 1915 թ. հոկտեմբերի 19-ին տպված ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ի՞նչ առիթով է ներկայացվում ձախ կողմում կանգնած գործչի գլխարկի վրա գրված պետության անունը (ինչո՞ւ է հենց այս ժամանակ նա ի հայտ գալիս և հանդիպում պատկերված գործիչների հետ):
բ. Ո՞ր իրադարձության մասին են ծաղրանկարում տեղ գտած դաժան խոսքերը:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ի՞նչն է Ք.ա. 720 թ. գրավել Սարգոն II-ը. 0,5 մ.
   ա) Կիպրոս բ) Սամարիա գ) Բաբելոն դ) Էլամ
2. Ո՞ր կայսրն է Գալլիայի բնակիչներին շնորհել հռոմեական Ծերակույտում ընտրվելու իրավունք. 0,5 մ.
   ա) Կլավդիոս բ) Տիբերիոս գ) Վեսպասիանոս դ) Տրայանոս
3. Որքա՞ն զինվորներով է 1453 թ. Կ. Պոլիսը պաշարել Մեհմեդ II-ը. 0,5 մ.
   ա) 100 հազար բ) 150 հազար գ) 200 հազար դ) 250 հազար
4. Ե՞րբ է կնքվել Ամյենի հաշտության պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 1799 թ. բ) 1802 թ. գ) 1805 թ. դ) 1806 թ.
5. Ո՞ր թվականին է Ռուսաստանի նախաձեռնությամբ Հաագայում հրավիրվել 26 պետությունների միջազգային համաժողովը, որտեղ ընդունված համաձայնագրով երաշխավորվում էր միջազգային վեճերի խաղաղ կարգավորումը, պետություններին հանձնարարվում էր կրճատել ռազմական ծախսերը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Սապա Ինկա Պաչակուտի 2. Մոնթեսումա II 3. Հենրի(խ) VIII 4. փադիշահ Աքբար
   ա. 1509-1547 թթ. բ. 1542-1602 թթ. գ. 1502-1520 թթ. դ. 1438-1471 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա) Պերիկլեսի օրոք վերացվել է լիթուրգիայի (ընծայաբերման) երևույթը:
   բ) 1929 թ. սկզբին ԱՄՆ ազգային հարստությունը կազմում էր 450 մլրդ դոլար, այնինչ 1913 թ. այն 187 մլրդ էր:
   գ) Հռոմեական իրավունքի սկիզբը Տասներեք տախտակների օրենքներն էին:

դ) Մարշալի պլանով Իտալիան երեք տարվա ընթացքում ստացել է 15 մլրդ դոլարի օգնություն:
ե) Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլն ընդգրկում է XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1918 թ.:
զ) 1816 թ. սուլթան Մահմուդ II-ը վերացրել է օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումները:
է) 1830 թ. սուլթանը ստիպված էր Սերբիան ճանաչել որպես ինքնավար ժառանգական իշխանություն:
ը) 1891 թ. Բրազիլիան դարձել է հանրապետություն և կոչվել Բրազիլիայի Միացյալ Նահանգներ:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին,
բ. Հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. Ո՞ր թվականին է հիմնադրվել ընդհանուր գունանշված պետությունը (գունավորմամբ ներառված են նաև ենթակա պետական կազմավորումները):
բ. Ո՞վ է նշված պետությունից նվաճել դրա մայրաքաղաքը:

10. Ո՞վ է այս նշանավոր կտավի («Գիշերային պարեկ» կամ «Գիշերային դետք», 1642 թ.) հեղինակը. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում ձախ կողմում պատկերված կինը:
բ. Քաղաքական ի՞նչ իմաստ ունի այս երեք կանանց միությունը:
գ. Ո՞ր թվականին սկսված իրադարձությունն է պատկերված հետին պլանում:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2023 թ.